ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ԵՊՀ ՌԵԿՏՈՐԻ Ժ/Պ

Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ_____

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ» ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ

1. «Երևանի պետական համալսարանում դասավանդման գերազանցության մրցանակի» ըստ անվանակարգի համակարգող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) ԵՊՀ ռեկտորի ժ/պ 221/120 2019թ. նոյեմբերի 27-ի հրամանով սահմանած իր լիազորություններն իրականացնելիս գործում է ԵՊՀ ռեկտորի ժ/պ վերոհիշյալ հրամանի և սույն աշխատակարգին համապատասխան:
2. Թեկնածուների առաջադրման, մրցանակակրի ընտրության և այլ կազմակերպական աշխատանքների կատարման նպատակով հանձնաժողովը հրավիրում է նիստեր: Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում են անդամների ընդհանուր թվի առնվազն 2/3-ը: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:
3. Մրցույթի արդյունքներով հանձնաժողովը յուրաքանչյուր թեկնածուի համար կայացնում է հետևյալ որոշումներից մեկը՝
   ա) մրցանակակիր ճանաչելու և մրցանակը շնորհելու մասին,
   բ) մրցույթը չկայացած համարելու մասին,
   գ) մրցանակակիր չճանաչելու մասին:
4. Մրցանակակիրների վերաբերյալ հանձնաժողովի որոշումները մինչև մրցանակաբաշխության անցկացման օրը ենթակա չեն հրապարակման:
5. Հանձնաժողովի անդամները Հանձնաժողովի հերթական նիստի հրավիրման մասին տեղեկացվում են ոչ ուշ, քան երեք աշխատանքային օր առաջ, իսկ արտահերթ նիստի հրավիրման մասին՝ ոչ ուշ, քան մեկ ժամ առաջ: Հանձնաժողովի նիստերի հրավիրման մասին Հանձնաժողովի անդամները տեղեկացվում են հեռախոսով կամ էլեկտրոնային հաղորդագրությամբ: Հանձնաժողովի որոշմամբ կազմվում է տվյալ նիստի արձանագրությունը:
6. Հանձնաժողովը դասալսումներն իրականացնում է մրցանակակրի համար չնախատեսված կերպով: Հանձնաժողովը կարող է որոշում ընդունել տվյալ դասալսմանը փորձագետներ ներգրավելու մասին: Դասալսումները և դրանց

վերլուծությունը տեղի են ունենում ըստ հավելված 1-ում ներկայացված դասի գնահատման հարցաթերթի և դասալսման արդյունքների վերլուծության:

7. Թեկնածուները գնահատվում են 100 միավորանոց համակարգով՝ ըստ անվանակարգերի ստորև ներկայացված չափանիշներին համապատասխան:

Ա. Ֆիզիկամաթեմատիկական և բնագիտական անվանակարգերում՝

Աղյուսակ 1.

Գնահատման չափանիշներ	Միավոր
Թեկնածուների ուսանողների գնահատականներ	25%
Ժամանակակից դասավանդման մեթոդների օգտագործում	25%
Աջակցության նամակներ	25%
Դասալսումներ	25%

Բ. Բանասիրական և հասարակագիտական անվանակարգերում՝

Աղյուսակ 2.

Գնահատման չափանիշներ	Միավոր
Թեկնածուների ուսանողների գնահատականներ	20%
Աջակցության նամակներ	10%
Ժամանակակից դասավանդման մեթոդների օգտագործում	20%
Դասալսումներ	30%
Ուսումնամեթոդական ձեռնարկներ	20%

Հավելված 1

ԴԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹ

Դասախոս _____

Դասընթացի անվանումը _____

Ուս.տարի _____

Դասալսող/-ներ/ _____ _____

Ուսանողների քանակ _____ Ամսաթիվ ___/___/_____

Գնահատման սանդղակ

4— իրականացվել է գերազանց
3— իրականացվել է լավ
2— իրականացվել է որոշակիորեն
1— իրականացվել է ոչ այդքան լավ
0— չի դիտվել/դժվար է գնահատել

	Դիտման ասպեկտները	Գնահատական				
	1. Նախաբան և կողմնորոշում					
1.	Բացատրում է նյութի նպատակն ու խնդիրները	4	3	2	1	0
2.	Ներկայացնում է նախորդ նյութի հետ կապը	4	3	2	1	0
3.	Բացատրում է առարկայի մեջ տվյալ նյութի տեղը	4	3	2	1	0
	2. *Ուսանողների ներգրավվածություն*					
4.	Հարց է տալիս և սպասում պատասխանի	4	3	2	1	0
5.	Հռետորական հարցեր է հնչեցնում (որպես քննարկման մաս)	4	3	2	1	0
6.	Պահանջում է ուսանողներից, որպեսզի մասնակցեն հարցի քննարկմանը	4	3	2	1	0

	3. *Վերաբերմունք*					
7.	Հետաքրքրված է, ոգևորված է առարկայով	4	3	2	1	0
8.	Ուսանողների մոտ հետաքրքրություն է առաջացնում առարկայի հանդեպ	4	3	2	1	0
9.	Ուսանողներին վերաբերվում է հարգանքով	4	3	2	1	0
	4. Դասավանդման մեթոդ					
10.	Օգտագործում է տեսա-ձայնագրված նյութ (օր.՝ Power Point), ուսումնաօժանդակ նյութեր, սարքեր	4	3	2	1	0
11.	Կիրառում է դասավանդման տարբեր մեթոդներ	4	3	2	1	0
12.	Շեշտադրում է նյութի հատվածների միջև անցումները	4	3	2	1	0
13.	Շեշտադրում է գլխավորը, հիմնարարը	4	3	2	1	0
14.	Պարզ և հստակ բացատրելու ունակություն ունի	4	3	2	1	0
15.	Կիրառում է կոնկրետ և պրակտիկ օրինակներ	4	3	2	1	0
16.	Լսարարանի հետ պահում է տեսողական կապ	4	3	2	1	0
17.	Պահում է համապատասխան տեմպ	4	3	2	1	0
18.	Գրում է պարզ	4	3	2	1	0
19.	Կիրառված դասավանդման մեթոդները թույլ են տալիս հասնել դասի նպատակներին	4	3	2	1	0
	5. Ամփոփում					
20.	Կրկնում է եզրահանգումները	4	3	2	1	0
21.	Պատասխանում է հարցերին	4	3	2	1	0
22.	Ավարտում է ժամանակին	4	3	2	1	0
	6. Վարվեցողություն					
23.	Լսարան է մտնում ժամանակին	4	3	2	1	0
24.	Արտաքին տեսքը կոկիկ է	4	3	2	1	0
25.	Ունի ձևավորված խոսքի մշակույթ	4	3	2	1	0

Լրացուցիչ մեկնաբանություններ

_____

_____

_____

_____